

ԱՆ. ԹԱՄԱՆՅԱՆԻ ԿՅԱՆՔԻ ԹԱՎՈՒՐՑՑԱՆ ՇՐՋԱՆ

Դ. Ս. ՄԱՆՈՒԿՅԱՆ, Ա. Գ. ԹԱՄԱՆՅԱՆ

Այլ. Թամանյանի կյանքի թավրիզյան հատվածը (1921-1923 թթ.) անտեսվել է լուկ քաղաքական նկատառումներով:

1920 թ. նոյեմբերի 30-ին ՌՍՖՍՀ կառավարության ցուցումով դաշնակցական կառավարությունը առանց դիմադրության զիջում է իշխանությունը Հայհեղկոմին, որն արդեն նախորդ օրը Քարվանսարայում (Իջևան) Հայաստանը հռչակել էր Սովետական հանրապետություն: Բանակցությունների արդյունքում կայացած համաձայնագրով երաշխավորվում է նախկին իշխանության քաղաքացիական ու զինվորական պաշտոնյաների անվտանգությունը:

Բոլշևիկների իշխանության ընթացքում (1920 թ. դեկտեմբերի 2 - 1921 թ. փետրվարի 18) Թամանյանը մնում է իր պաշտոններում, դրանք են՝

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր ճարտարապետի վարչության նախագահ,

2. հնությանց և գեղարվեստից պահպանման հանձնաժողովի նախագահ (ՀԽՍՀ լուսժողկոմ Ա. Հովհաննիսյանի 1921 թ. հունվարի 8-ի հրամանով վերահաստատված),

3. պետական հիմնարկների շենքի կառուցման շինարարական հանձնաժողովի նախագահ:

Պահպանվել են Թամանյանի ստորագրությամբ մի քանի փաստաթղթեր՝ ուղղված հեղկոմի նախագահ Ս. Կասյանին, իր վերապահությանը վերաբերող հարցերի մասին, որոնցից երևում է, որ նա, անկախ իր քաղաքական համակրություններից, ամենից կարևորը համարում է իր մասնագիտական աշխատանքը: Նա խնդիր է դնում իշխանությունների առաջ՝

• Ծինանյութի պակասը Ռուսաստանից հայթայթելու մասին:

• Մարտարապետ Ն. Բունիաթյանցին և ինժեներ Ս. Միզանաջյանցին Հայաստան հրավիրելու մասին:

• Համալսարանի պրոֆեսոր Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանին գրավված Կարսից ազատելու մասին (Գ. Հովսեփյանը հոկտեմբերի սկզբին մեկնել էր Ալեքսանդրապոլ և Կարս՝ ժողովրդին ոգևորելու համար, սակայն Կարսում գերի էր ընկել թուրքերին):

• Անհի հուշարձանների պահպանությունն ապահովելու մասին և այլն:

Սակայն բոլշևիկները շուտով հետ կանգնեցին համաձայնագրով ամրագրված կետերից: Դեկտեմբերի 6-ի դեկրետով կազմվում է արտակարգ հանձնաժողով, որը սկսում է բռնություններ կիրառել: Հունվարի վերջին Հայաստան է գալիս «վաստակավոր» չեկիստ Գ. Աթարբեկյանը, և բռնությունները դառնում են բացահայտ: Ձերբակալում են բոլոր նրանց, ովքեր քիչ թե շատ աչքի ընկնող դաշնակցական էին կամ համակիր կամ, ավելի ճիշտ, որևէ պատճառով իրենց անցանկալի անձ: Բանտում կացնաճար են արվում գորապետներ Համազասպը և Նիկոլայ Դորդանյանը, իրենց դատաստանին են սպասում ձերբակալված բազմաթիվ մտավորականներ՝ նախկին վարչապետ, բժիշկ Հ. Օհանջանյանը, գրողներ և քաղաքական գործիչներ Լ. Շանթը, Ն. Աղբալյանը և ուրիշներ: Բացառված չէր և Այլ. Թամանյանի ձերբակալությունը, որը ոչ միայն աշխատակցել էր Հանրապետությանը, այլև իր նախագծով նկարիչ Հակոբ Կոջոյանը 1920 թ. հուլիսին կատարել էր Հանրապետու-

թյան զինանշանը (այն որոշ փոփոխություններով կիրառվում է և այժմ):

Ս. Վրացյանի զգուշացումը հեղկոմին քաղաքացիական պատերազմի վտանգի մասին մնում է անհետևանք: Ժողովրդական ընդվզումներ են սկսվում Երևանի շրջակայքում: Դիմադրությունը հեղկոմի բռնություններին աճելով տարածվում է քաղաքի մեջ, և փետրվարի 18-ին բոլշևիկները փախչում են Ղամարլու (Արտաշատ):

Իշխանությունը Երևանում անցնում է «Հայրենիքի փրկության» կոմիտեին, որը, սակայն, չունի որչափեք, ոչ զենք, ոչ պարեն և կտրված էր աշխարհից: Բոլոր դիմումները բոլոր երկրներում մնում են անարձագանք: Հոգեբանական հարված էր անս Վրաստանի խորհրդականացումը 1921 թ. փետրվարի 25-ին: Կոմիտեի ճակատագիրը նախորոշված էր. այն դատապարտված էր անկման: Ռուսական զենքի օգնությամբ հեղկոմը ապրիլի 2-ին վերադառնում է դատարկված Երևան: Կոմիտեն Բաշ Գառնի - Միլի ձոր - Դարալագյազ (Վայոց ձոր) ուղիով անցնում է Ջանգեզուր՝ Նժդեհի մոտ: Ջորքի և վարչակազմի հետ հեռանում է և ամբողջ մտավորականությունը, որի հետ և՛ Ալ. Թամանյանը (առանց ընտանիքի):

Չնայած պարտությանը՝ փետրվարյան ապստամբությունն այնուամենայնիվ որոշ արդյունք ունեցավ.

1. հայ մտավորականությունն ազատվեց բանտարկությունից (Ալ. Թամանյանը նույնպես),

2. ապստամբությունը զգաստացրեց բոլշևիկներին՝ հարկադրելով նրանց հետազայում վարել մեղմ քաղաքականություն:

Երևանից Ջանգեզուր մեկնող փախստականների թիվը 10.000-ից ավելի էր: Նրանց մեծ մասը ճանապարհն անցնում է ոտքով: Թամանյանին տրամադրել էին ձի: Նրա ուղեկիցներն էին Հ. Քաջազունին, Հ. Տեր-Դավթյանը, Ն. Աղբալյանը, Հ. Օհանջանյանը, Հ. Կոչոյանը, Ս. Վրացյանը և ուրիշ նշանավոր գործիչներ:

Ջանգեզուրն ի վիճակի չէր ապաստան տալ այդքան մեծ բազմությանը, և որոշվում է փախստականներին ուղարկել Պարսկաստան: Դեպի Պարսկաստան գաղթը ունեցել է երկու փուլ՝ մեկը կապված Երևանի անկման հետ, մյուսը՝ Ջանգեզուրի: Գաղթականների առաջին խումբը՝ բաղկացած հասարակական ու պետական ակնավոր գործիչներից և մտավորական ակնառու դեմքերից, Թավրիզ է հասնում 1921 թ. մայիսի սկզբին: Թամանյանը եղել է այս խմբում:

Վարարած և կամուրջ չհանդուրժող Արաքսն անցնելը բազմաճակատ ժողովրդի համար նոր փորձություն էր: Մեղրիի դիմացի ափի տերնուտնօրենն ավատական իշխանավոր ամիր Արշատն էր, որն ամեն գաղթականի համար պահանջում է կես ոսկի: Ծախսն իր վրա է վերցնում տարագիր կառավարությունը: Անցումը կատարվում է պարսիկ թիավարների բերած՝ այծի տիկերի վրա հարմարեցված խախուտ լաստերով: Ամեն լաստի վրա կարող էին տեղավորվել 2-3 հոգի, դիմացի ափ դուրս էին քալիս հոսանքի բերած վայրում: Ջրի մեջ շրջվելու հավանական վտանգը մեծ էր: Թամանյանի ղեկավարությամբ ճարտարագետների մի խումբ փորձում է երկու ափերի միջև պողպատալարի ճոպան անցկացնելով ապահով դարձնել լաստերի նավարկումը: Փորձն անցնում է անհաջող:

Սկզբնական շրջանում, երբ տարագիրների հոսքը դեռ տարերային բնույթ չէր ստացել, եկվորները մեծ մասամբ տեղավորվում էին հայ ընտանիքներում և ամենալայն հյուրասիրության ու ջերմ վերաբերմունքի արժանանում ամիսներ շարունակ: Թավրիզահայությունը Մելիք-Թանգյան սրբազանի, թեմական խորհրդի և բարեպարական միությունների ջանքերով ոչինչ չի խնայում տարագիրներին օգնելու համար: Հետագայում Ներսես արքեպիսկոպոս Մելիք-Թանգյանի՝ Ատրպատականի հայոց թեմի առաջնորդի այս տարիների հայանպաստ գործունեությունը մեծ դրվատանքի է արժանանում հայ մամուլում:

Սակայն գաղթականների թվի անընդհատ աճը ստիպում է նրանց մեծ մա-

սամբ տեղավորել Լիլավա (Լեյլաբադ) և Ղալա (Բերդաթադ) հայկական թաղամասերի դարոցներում ու ակումբներում կազմակերպված հանրակացարաններում: Թամանյանին տեղավորում են Լիլավայի բնակիչ Մաթևոսյանի տանը: Տարագիր կառավարությունը հոգում է գաղթականների մասին՝ իր միջոցներով կազմակերպելով նպաստ՝ դրամ, հագուստ, պարեն, բնակարան: Մշակութային ձեռնարկումների համար նյութական շատ քիչ միջոցներ էին մնում, բայց և այնպես կազմակերպվում է 1 միջնակարգ և 1 բարձրագույն դպրոց: 1921 թ. հուլիսի 18-ին ակադեմիկոս Թամանյանի նախաձեռնությամբ ու ղեկավարությամբ և կառավարության նյութական ու բարոյական օժանդակությամբ բացվում է գեղարվեստական ստուդիա: Նպատակն էր գլխավորապես տարագիր ուսանողությանը տալ գեղարվեստական զարգացման հիմունքներ: Ավանդվում էին նկարչություն, գեղարվեստի, մասնավորապես հայ արվեստի պատմություն: Ուսանողների թիվը սկզբում 20 էր, որից 3-ը՝ տեղացի: Սակայն այդ թիվը, ինչպես և ուսանողների կազմը անկայուն էր: Ջանազան պատճառներով հեռանում էին հին սովորողները և գալիս էին նորերը: Բայց հիմնական կորիզը՝ բաղկացած 8 հոգուց, մնում և աշխատում է մինչև վերջ, այն է՝ մինչև ստուդիայի փակվելը՝ 1922 թ. մարտը: Ստուդիայի միջոցները կազմվում էին բացառապես ուսանողների ուսման վճարներից, որոնց մեծ մասը կառավարության տված թոշակներն էին՝ ամսական 600 դրամ: Շուրջ մեկ տարվա գոյության ընթացքում ստուդիան տվել է ընդամենը 51 շրջանավարտ, որից 24-ը՝ տեղացի՝:


Ստուդիայում Թամանյանին գործակցում էր Հակոբ Կոջոյանը: Նրա մոտ դասեր էին առնում նաև Թամանյանի ավագ զավակները՝ Մարիան և Գևորգը: Թավրիզում եղած տարիներին Կոջոյանը նկարում է իր մի շարք լավագույն աշխատանքները՝ «Մաշարան Թավրիզում», «Հայկական մունետիկ» և այլն: Նա Երևան է վերադառնում 1922 թ. վերջին:

Թավրիզում Թամանյանին աշխատանքի են հրավիրում քաղաքապետարան (բալադիե) որպես ճարտարապետ, և այնտեղ նա աշխատում է ընդհուպ մինչև իր վերադարձը Երևան: Նրա մոտ գեղեցիկատ է աշխատել Ավագ Լալայանը, օգնական՝ ճարտարապետ Սարգիսը, գծագրող՝ պարսիկ Ջամշիդը: Հետպատերազմյան տնտեսական ճգնաժամը Թավրիզում ևս սահմանափակել էր շինարարության ծավալները: Այդ տարիներին Թամանյանը կատարում է հետևյալ նախագծային աշխատանքները՝

1. Մուշեղ Տեր-Չաքարյանի տան ճակատը Պարոն Ավագ փողոցում: Մ. Տեր-Չաքարյանը զբաղվում էր արտասահմանից ապրանք ներմուծելով, 1920 թ. գարնանը դառնում է Հայաստանի Հանրապետության հյուպատոսը և հայրական տունն էլ դարձնում հյուպատոսարան (տե՛ս նկ. 1):

2. Մելքոն Բաղդասարյանի տունը Լիլավայի Քարաշենք մասում: Կառույցն այրվել է և տեղը կառուցվել բնակելի տուն:

3. ՀՀ Դաշնակցության պանթեոնը Լիլավայի Սուրբ Սարգիս եկեղեցու տարածքում:



Նկ. 1
Մուշեղ Տեր-Չաքարյանի տան
ճակատը (վերականգնման փորձ
հին լուսանկարից)

¹ Տե՛ս Յ. Իրազեկ, Մօսիկ անցեալից. Պատմական դեպքեր և ապրումներ. 1917-1922 թթ. Պեյրուս, 1956, 153 էջ:



Նկ. 2

Պարնավա (Պարոն Ավագ) փողոցը Թավրիզի Լիպա թաղամասում

կան ճարտարապետությանը Թամանյանը ծանոթ էր դեռևս Պետերբուրգից: 1908 թ. նա մասնակցել էր մզկիթի նախագծի մրցույթի (տե՛ս նկ. 4):

7. Երևանի գլխավոր հատակագծի մշակումը, որի գծագրերը հետը տարել էր:

Մեզ հասած ֆոտո և գծագրական պատճեններից երևում է, որ կառույցները Թամանյանը նախագծել է դասական ճարտարապետության կանոններով, սակայն ակնհայտ է նաև հայկական ճարտարապետության հետ երկու տարվա ընթացքում նրա ինտենսիվ ծանոթացման արդյունքը: Ազգային գուգակցումը դասականի հետ նա արդեն հղացել էր և դա զարգացնում էր նաև Թավրիզում (ճակտոն, խորքաշատ կամար՝, , հարթ խոյակ):

Իրեն վարկաբեկած հեղկոմը մերժողական վերաբերմունքի է արժանանում ոչ միայն այսուայնտեղ ծվարած ժողովրդական զանգվածների, այլև Ռուսաստանի բոլշևիկյան ղեկավարների կողմից: ՌԿ(Բ)Կ կենտկոմը Վ. Լենինի առաջարկով 1921 թ. մայիսին Հայաստան ղեկավար աշխատանքի է ուղարկում մի շարք հայ կոմունիստների, դրանց թվում Ա. Մյասնիկյանին, Ս. Սրապիոնյանին (Լուկաշին), Ա. Երզնկյանին և ուրիշների, որոնք և՛ մտածելակերպով, և՛ բարոյական կեցվածքով զերծ էին բոլշևիկյան ծայրահեղականությունից և հետագայում զորավիգ են կանգնում Թամանյանին իր կառուցողական առաքելության մեջ:

Երկիրը վերականգնելու համար խորհրդային իշխանությանն անհրաժեշտ էին կադրեր: Գիտակցելով իր ժողովրդի ողբալի վիճակը՝ նոր ղեկավարությունը,

² Տե՛ս Արմեն Մինասյան, Այ. Թամանյանի աշխատանքները Թավրիզում (պատմեմանահանություն), Թեհրան, 1995, 18 էջ:

ինչպես ժամանակին դաշ-
նակցական կառավարությու-
նը, դիմում է աշխարհով մեկ
սփռված հայ մտավորական-
ների հայրենիք վերադառ-
նալու կոչով: Դեռևս նախկին
հեղկոմը, դատարկված Երե-
վանից ցնցված, երկու ան-
գամ իրար ետևից հայտարա-
րում է «ներում»: Առաջին «նե-
րումը»՝ ապրիլի 10-ին, մաս-
նակի էր, երկրորդը՝ ապրիլի
24-ին՝ համընդհանուր: Կա-
ռավարության ներկայացու-
ցիչը ներման այդ հրամա-
նագրերը ձեռքին գալիս է
Թավրիզ՝ տարագիրներին
համոզելու, որ վերադառնան
հայրենիք: Դա տևում է մինչև
հոկտեմբեր ամիսը:


Տարագիր կառավարու-
թյունն ինքը նույնպես ձգտում
է մարել գաղութը և իր կող-
մից ոչ միայն հորդորում է
գաղթականներին վերադառ-
նալ Հայաստան, այլև վերա-
դարձողներին օժանդակում է
նյութապես: Թավրիզում ա-
պաստանած 8000 տարագիրներից 6800-ը մինչև սեպտեմբեր վերադառնում են:

1921 թ. հոկտեմբերին խորհրդային իշխանությունների վերաբերմունքը տա-
րագիրների նկատմամբ կտրուկ փոխվում է. նրանք համարվում են խորհրդային
կարգերի նկատմամբ ոչ չեզոք տրամադրված զանգված, և նրանց վերադարձը
դառնում է խնդրահարույց, իսկ արդեն վերադարձածների մի մասին աքսորում են
Սիբիր: Սահմանները փակվում են: Ավելին՝ Պարսկաստանի կառավարությունից
պահանջում են աքսորել տարագիրների ղեկավարությանը:

Սակայն Թամանյանի հարցում խորհրդային իշխանության վերաբերմունքն
այլ էր: Մյասնիկյանի նոր ձևավորած կառավարությունը փնտրում է միջոցներ՝
Թամանյանին վերադարձնելու համար: Փորձում է նույնիսկ բյուրոկրատական
քաշքշուկով խանգարել ընտանիքի հետ Թամանյանի միանալուն, երբ Կամիլյա
Մատվենևան 1921 թ. հուլիսին երեք երեխաների հետ Երևանից մեկնում էր Պարս-
կաստան՝ ամուսնու մոտ (մինչև Ջուլֆա՝ երկաթգծով, այնուհետև՝ կառքով):


Առաջին հրավերը Թամանյանին ուղարկում է լուսժողկոմ Աշոտ Հովհաննի-
սյանը արտաքին գործերի ժողկոմ Ասքանազ Մոսվյանի առաջարկով 1921 թ.
հուլիսի 26-ին: Նամակում բառացիորեն հորդորվում էր լիովին վստահել իրենց
ու վերադառնալ: Միաժամանակ ժողտնտխորհի նախագահ Ս. Լուկաշինը հե-
ռագրում է Պարսկաստանում գլխավոր հյուպատոս Ի. Երզնկյանին՝ դիմել Թա-
մանյանին Հայաստան վերադառնալու առաջարկով: Սակայն սարսափը դեռևս
թարմ էր, և առաջարկը մնում է անպատասխան:

Երկրորդ հրավերը ուղարկվում է հենց իր՝ Լուկաշինի ստորագրությամբ
1922 թ. հունվարի 4-ին: Այս առաջարկին Թամանյանը պատասխանում է, որ ար-



Բնակելի տան նախափ տարբերակներ

Նկ. 3



Նկ. 4

Հասարակական կենտրոն թավրիզում

մշակույթի ակադեմիայի գործիչներից մեկը լինելով՝ Գա, սակայն, ընկել էր իր հնարավորություններին բոլորովին չհամապատասխանող միջավայր: Իհարկե Գա կարող էր տեղափոխվել եվրոպական մի որևէ խոշոր քաղաք և վարել բարեկեցիկ, քաղաքակիրթ կյանք: Մտահոգիչը այն էր, որ գնալով ի չիք կղաճար իր մեծ որոշումը, իր կրեդոն՝ «...ուժերի ներածին չափ ծառայել Հայաստանի կուլտուրական վերածննդին»: Արմատներից եկած արյան կանչն էր դա, որը բխում էր սերունդներով Հայաստանից հեռու ապրած ընտանիքից:

Հիմնավորված մտավայրությունը բոլշևիկյան պատժիչ օրգաններից մասամբ փարատվում էր այն բանով, որ և՛ Մյանսկիյանը, և՛ Լուկսչինը իր հայրենակիցներն էին՝ նորնախիջևանցիներ, և թամանյանը չէր կարծում, որ իր վստահությունը նրանք ի դերն հանեն: Ավելին, Լուկաշինին՝ որպես իրավաբանի թամանյանը ծանոթ էր դեռևս Պետերբուրգից, որտեղ վեց տարի գործակցել էր նրան հայկական եկեղեցու խորհրդում՝ չկասկածելով, թե Գա բոլշևիկ է: Լուկաշինը Պետերբուրգի հայկական եկեղեցիների գույքի կառավարման խորհրդի գործավարն էր, իսկ թամանյա. չ՝ վերակառուցող ճարտարապետը:

Թամանյանը Հայաստան է վերադառնում 1923 թ. մարտին և ապրիլի 4-ին նշանակվում է ՀԽՍՀ ժողովխորհրդին և տնտեսական խորհրդակցությանն առընթեր ճարտարապետական-տեխնիկական ծրագրային գործերի խորհրդատու: Սկզբից Գա ենթադրում է գալ բանակցելու նպատակով, ուստի և գալիս է առանց

դեմ համաձայնության երկու ամսակ է ուղարկել¹:

Թեր և դեմ կողմերը կշռադատելով՝ թամանյանը որոշում է դիմել ռիսկի: Որոշակի քայլեր ձեռնարկելուն ստիպում էր նախ մտահոգությունը ընտանիքի մասին: Ե՛վ թամանյանի ամսակներից, և՛ կոշոյանի հիշողություններից երևում է, որ թամանյանը կարողացել էր ապահովել ընտանիքը նյութապես, սակայն թավրիզում այդ ապահովությունը եղել է անկայուն: Անասելի վիշտ է պատճառում մեծ դասեր՝ Մարիայի մահը բժախտից (տիֆ) 1921 թ. դեկտեմբերի 9-ին 13,5 տարեկան հասակում: 1922 թ. հունիսի 31-ին ծնվում է չորրորդ երեխան՝ կրտսեր որդի Հուլիոսը (Юлий): Երեխաներին հարկավոր էր կրթել հարազատ միջավայրում:

Երկրորդ՝ ավելի հիմնավոր պատճառը, իր ստեղծագործական աշխատանքի հետանկարն է եղել: Թուսակյան

¹ Տե՛ս Ալեքսանդր Թամանյան (1878-1936 թթ.), Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Եր., 2000, 683 էջ:

ընտանիքի: Սակայն ընդունելությունն ու հեռանկարներն այնպիսին են եղել, որ նա միանշանակ որոշել է մնալ: Այդ առթիվ արժե նշել Հ. Աճառյանի՝ մեզ հասած բանավոր մի հիշողությունը (պատմել է շինարար-ինժեներ Գառնիկ Աֆրիկյանը): Ըստ նրա՝ Թավրիզի հայկական գաղութում կուտակված բոլոր մտավորականները ուզում էին տեղափոխվել Հայաստան: Եվ քաջալերում են Թամանյանին առաջինը գնալ՝ հաշվի առնելով նրա ռուսահայ և Ռուսաստանում հանրահայտ լինելու հանգամանքը: Եվ պայմանավորվում են, որ Թամանյանն իրենց մի անմեղ նամակ կգրի, որի վերջում ծածկագրի ձևով կհայտնի արդյունքի մասին: Եթե վատ լինի, նամակը կվերջացնի՝ «մնաք բարով, ձեր Թամանյան» խոսքերով, իսկ եթե լավ՝ «բարևներով ձեր Թամանյան»: Եվ Թամանյանը Երևանից նամակ է գրում և վերջացնում է «բարևներով, բարևներով, բարևներով ձեր Թամանյան» խոսքերով, այսինքն՝ շատ լավ է, եկեք:

Թամանյանի վերադարձը մեծ տպավորություն է թողել հայ հասարակության վրա և՛ սիրուքում, և՛ Հայաստանում: Հայ հասարակական գործիչների՝ այդ թվականների հիշողություններում անխտիր նշվում է այդ փաստը որպես երևույթ: Այն իր հայրենիքին անշահախնդիր ծառայելու, գիտակցաբար բարոյական արժեքները նյութականից բարձր դասելու օրինակ է եղել: Թամանյանից հետո վերադարձող մտավորականների ցանկը արագորեն մեծանում է, սակայն շատերը հետագայում ենթարկվում են հալածանքների:

Մեծ ճարտարապետի կյանքում ավարտվում է քաղաքական հանգամանքներով իրեն պարտադրված մի երկարատև անբարենպաստ շրջան, որը սկսվել էր դեռևս Պետրոգրադում 1917 թ. աշնանը իր ստեղծագործական հասունության տարիներին: Ինչպիսի՝ գործեր կարող էին կերտվել այդ տարիներին այլ պայմանների դեպքում: Սակայն նա իր կամքով և մտքի ուժով կարողացավ այդ կորուստը վերականգնել ինչպես ասում են՝ զրոյից: Իր երկրին, իր ժողովրդին թողեց հավերժի արժեքներ և պատմության մեջ մնաց որպես մեծ երախտավոր: Բայց այդ ամենը դեռ առջևում էր:

Д. С. МАНУКЯН, А. Г. ТАМАНЯН - *Тавризский период жизни Ал. Таманяна.* - В статье сделана попытка осветить неизвестный архитектурной обществу тавризский период жизни Ал. Таманяна: причина отъезда, деятельность, возвращение в Ереван. Эмиграция Таманяна была продиктована политической ситуацией в Армении, а работа в Тавризе не соответствовала его творческим возможностям и желанию служить родине.